

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

ՄԻԱԲԱՆԻՑ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ԱՐՄԱՇՈՒ

ՏԱՐԻ 45 ըդ

ԹԻՐ 1

1 ՅՈՒՆԻՍ 1896

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան	40	Ղուրուշ
Վեցամսեայ	20	,
Թղթատարուածեան ծախք տարեկան	10	,

Հատով ՄԷԿ Ղուրուշ

Կ. ՊՕԼԻՍ

Յալազ . (ԱՐՄԻՆԻՆԻ) Լ. Բաղդոյ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԾՆԱԹԵՐԹ ՄԸ	Մ. Ե. Օ.
ՊԷՏԲԸ	Ե. Վ. Դ.
ԿՐԾՆԻ ՐԱՐՈՅԱԿԱՆԸ	ԲԱԲԳԷՆ Վ.
ԿՈՐՋՈՒՄԾ ՀՍԱՆԵՐ	ԽՈՍՐՈՎ Վ.
ՆԵՐՍԻՍ ՄԵԾ	ԱՂԱՆ Վ.
ԺԱՄԱԳԻՐԲ	ՋԱԻԷՆ Վ.
ՓՈԲԻԻԿ ԴՍԱՐՋ	ՄՈՒՇԵՂ Վ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՂԱՅԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ	

Բաժանորդագրութեանց, ծանուցմանց եւ այլ մանրա-
մասնութեանց համար դիմել առ

Տնօրէնութիւն ԱՔԵԻԵԼՔ Լրագրոյ
Ղալաթիա, Նորասուցկեան — Խան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Ա

Թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառաց համար բաժա-
նորդագինք կանխիկ կը վճարուին:

Բաժանորդագրութիւնք կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ
1 ին կամ 15 ին:

ՄԱՍԻՍ

ՇԱՅԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՆ. ՏԱՐԻ

1 ՅՈՒՆԻՍ 1896

ԹԻՒ 1

ԿՐՕՆԱԹԵՐԹ ՄԸ

ՀԱՄԱՏԹ, ԿՐՕՆԹ, ԵԿԵՂԵՅԻ, բարոյական չես դի-
տեր թէ ինչ ներքին զօրութիւն մը ունին, որ միշտ կը
փնտրուին, և ամեն կարգի սիրտերու համար ալ մօտիկ
կողմ մը ունին:

Կրօնից վերաբերեալ իրեր և դործեր, դիրքեր և
խօսքեր առատ են ամեն տեղ, և ամենէն անտարբեր
սիրտեր ալ անոնց վրայ այնպիսի դուրդուրանք մը կը
դրան, որ կարծես թէ բնական զգացմանց հետեւանք է:
Փիլիսոփայութիւնն ալ կ'ընդունի կրօնական խղճի մը
գոյութիւնը:

Այն որ սրտի և զգացմանց մօտ է , պէտք է յարմար եղանակներով մշակուի . և պարբերական մամուլը ամենայարմար եղանակ մըն է , զոր հին դարեր չէին ճանչնար , և նոր դարերու գիւտն եղաւ . և շատ ազդեցութիւն ալ ստացաւ : Կրօնքն ալ մտաւ պարբերական գրութեանց ձեւին ներքեւ , և կրօնական թերթեր աշխարհի ամեն կողմ հաստատուեցան , տարածուեցան , բազմացան :

— Կրօնութիւնը մըն ալ մե'նք ունենանք — փախարք՝ հին է մեր մէջ ալ , և առաւել և նուազ յաջող ձեռնարկներ ալ տեղի ունեցան , որոց ոչ թիւը և ոչ պատմութիւնը կ'ուզեմք ընել , այլ միայն ըսել՝ թէ ոչ նորութիւն մը , և ոչ ալ անլուր բան մըն է կրօնական թերթի հրատարակութիւնը , որուն համար շատերէն յորդոր կը լսէինք , և մեր կողմանէ ալ պատրաստականութիւն պակաս չէր : Սկսելու փորձեր ալ եղան . լրագիրք տարիներ տուց՝ տեղեկութիւն ալ տուին , բայց անազան կը հասնէմք գործադրութեան :

Դպրեւանքը , իբրեւ կատարեալ եկեղեցական հաստատութիւն , եկեղեցւոյ շուրջը գործելու պարտաւորութիւնը կը զգայ , և գիտէ թէ իւր պարտքը միայն վարդապետներ կրթել և հասցնել չէ , միայն ամուսնաւոր կամ աշխարհիկ քահանայութեան համար աշխատիլ չէ այլ և հատարակ ժողովրդեան կրօնական պէտքերուն համար ալ օգտակար հրատարակութիւններ կատարել իւր նպատակին մէջն է :

Դժբաղդաբար պէտքը շատ , մեջոյր քիչ , և ամեն բան միանգամայն կատարել անհնարին : Եւ որովհետեւ կրօնական թերթի մը հրատարակութիւնը՝ դպրեւանքին նպատակէն ելող գործերէն մին է , ճիշդ այդ տեսութեամբ կ'ստանձնեմք մեզի առաջարկուած խմբագրութիւնը :

Մեր կրօնական թերթը բարձր խնդիրներով ծանրաբեռնել չեմք ուզեր . բանդէտ երեւնալու յաւակնու-

Թեամբ դժուարին նիւթերու մէջ չեմք մաներ, գիտա-
կան աստղաբեղի Թեւակոխելով արժանիքներ ստեղծել
չեմք սիրեր, մեր նպատակն է մեր ժողովրդեան օգտա-
կար ըլլալ, կրօնք ու բարոյական բացատրել, հաւատք
և եկեղեցի պարզաբանել:

Ձեմք ուրանար: Կրօնական ուսմանց գիտական ու-
ճին ալ արժանիքը և օգուտը, սակայն այն՝ այնպիսի
ճիւղ մըն է, որ քիչերուն միայն դիւրամտալէի է, և
մեր առաջ հանրութեան ծառայելու հարկը կը բաղձամք
լրացնել, ժամանակին յաջողութեան թաղով չդիտական
խնդիրներու մասը:

Բան մըն ալ աւառից սրտած եմք խորշիլ՝ վիճաբա-
նութիւնն է, ըլլա՛յ այն անձնական խնդիրներու վրայ,
ըլլա՛յ անկարելւոր պարտադարձից վրայ: Ընդդիմաբանու-
թիւնն անտի ժամաւաճառ մըն է, որ հանրութեան
օգուտ չունի: Հետեւաբար կանուխէն կը յայտարարեմք,
թէ անոնք որ մեղի հետ կամ մեղի դէմ խնդիրներ յա-
րուցանել կը մտաբերեն, մեզմէ պատասխանի չպատահն:
Պատասխանը ընդդիմաբանութեան և վիճաբանութեան
դուռ կրնայ բանալ, և ազատհալութեան կանոնն է,
վտանգներէն վախճիլ:

Անք թերթին նիւթերը կրօնական և բարոյական և
եկեղեցական շրջանակին մէջ պահելով հանդերձ, պիտի
շանամք դանաղանութեամբ և ճիսութեամբ և ընտրու-
թեամբ հաճելի ընել: Սուրբ Գիրք և սուրբ Հարք,
ածնք և պաշտամունք, ծէսք և արարողութիւնք, օրէնք
և կանոնք, բարոյականութիւն և բարեկարգութիւն, ե-
կեղեցականութիւն և գաղափարակութիւն, քարոզութիւն
և վարչութիւն, մեր յօդուածներուն նիւթ պիտի ըն-
ծայեն փոխանակաւ: Ընդարձակ յօդուածներէ պիտի
դդուչանամք մեղքերը չյոգնեցնելու համար:

Որչափ և պիտի ջանամք օրուան պարտադաներու
համաձայն, և մեղքերը հետաքրքրող նիւթերու ընտ-
րողութիւններ ընել, այսու հանդերձ սիրով պիտի ջա-

նամք գոհացնել մեղի ուղղուած օգտակար և լուրջ առաջարկներ , և խնդրուած նիւթերու բացատրութիւնը տալ յատուկ պատասխաններով կամ յօդուածներով :

Կրօնական թերթի մը ուղղութիւնը շատ ազատութիւն չվերցնէր , որ մեր ուղղութիւնը բացատրելու պէտք ունենամք : Մեր ուղղութիւնը մեր Սուրբ և Առաքելական և Ուղղափառ եկեղեցւոյ ուղղութիւնն է ըստ ամենայնի : Մեր եկեղեցին նեղ և անձուկ կապերով սեղմուած չէ , ներողամիտ ակնարկներով ոգեւորուած է , հնաւանդ կանոնաց հաւատարիմ է , նորութեանց և կամայականութեանց բարեկամ չէ : Քրիստոսի աստուածային վարդապետութեանց աշակերտ է , Աւետարանի ջինջ բարոյականին հետեւող է ինչ որ Լուսաւորիչը սորվեցուց այն մեր հաւաքն է . ինչ որ Սահակ և Մեսրոպ օրինադրեցին , այն մեր կանոնն է . ինչ որ ասոնց հետեւող Հայրապետներ և Վարդապետներ սորվեցուցին , այն մեր ուսումն է . չեմք սիրեր անոնցմէ պակսեցնել , չեմք սիրեր անոնց վրայ յաւելուլ : Ահա մեր ուղղութիւնն :

Քանի մը մասնաւոր ծանուցումներ ալ աւելցնեմք :

Կրօնաթերթին մէջ պիտի գրեն գլխաւորապէս Դըպրելանուց Միաբաններն :

Իւրաքանչիւրին յօդուածները որոշիչ տառերով պիտի զանազանուին :

Ոճի և լեզուի տարբերութիւնք իւրաքանչիւր գրողի ճաշակին թողուած են :

Նախնեաց և օտարաց ընտիր և օգտակար գործերէն թարգմանութիւններ ալ պիտի գրուին :

Դուրսէ յօդուածներ պիտի ընդունուին , եթէ ընդհանուր ուղղութեան համապատասխան լինին :

Քաղաքական և ազգային լրոց չաբաթական քաղուած մը պիտի աւելցուի , ի գիւրութիւն անոնց որք

հանապազօրեայ թերթերու ընթերցման դիւրութիւն
չունին:

Մատակարարութեան և հրատարակութեան գործու-
ղութիւնք Ալեք-եւի անօրինութեան կողմանէ ստանձ-
նուած են:

Մ. Ն. Օ.

Պ Է Տ Ք Ը

ԿԱՐԵՆԼԻ է շատ չփոք գաղափար մը կազմել այն իրերուն
վրայ, որոնց պէտք ունի մարդ, սակայն պէտք չստուածն ինք-
նին չա՛տ որոշ բան մ'է մեր փորձառութեան մօտ: Ատոր
չուրջը կ'դառնայ մեր կեանքի բոլոր գործունէութիւնը, և
գոհացում տալ պէտքերուն՝ միակ ողջմտութիւնն է ապրելու
սահմանուած ընկերութեան մը համար:

Պէտքերն կ'զանազանուին սակայն՝ կ'նուազին կամ կ'ա-
ւելնան, երբեմն զիրար կը վանեն ժամանակի պահանջումնե-
րուն համեմատ. անոնց այդ յեղյեղուկ հանգամանքը կրնայ
զմեզ շատ անգամներ խոտորեցնել, մանաւանդ եթէ բնական
չըլլան անոնք, կամ չբղխին բուն իսկ մարդուն էութենէն:

Այս կեանքին մէջ սովորաբար պէտքերն այլանդակ երե-
ւոյթներ ալ կ'առնուն, այսինքն պէտք նկատուած անտիքներ՝
որոնց տրամադրութեան տակ կ'զենենք երբեմն մեր բոլոր ոյ-
ժերը՝ փոխանակ զմեզ տանելու լաւագոյն վարդացումի կամ
կանոնաւոր աճումի՝ աւելի սպառում կ'սպառնան մեր անձե-
րուն՝ մեր կեանքին:

Շատ անգամ ալ այնպիսի պէտքեր՝ որ մարդուն նախնա-
կան կեանքին հետ ծրարուած կուգան՝ կ'ծայրատուին՝ կ'ըն-
դոտնուին կիրքերու գոհացումով և անձնահաճ մտածութիւն-
ներով, և չգիտար մարդ թէ ի՛նչ սպանութիւն մը կ'գործէ իր
անձին վրայ:

Հարկ է ուրեմն ճանչցնել ժողովուրդին իր էական պէտքերը՝ թէ՛ բարոյական ըլլան անոնք և թէ՛ բնախօսական . հարկ է զգացընել իրեն թէ՛ առողջ ընտրութեան մը շնորհիւ կրնայ ինքը հետեւական մնալ իր վիճակին ու ճակատագրին հանդէպ . հարկ է սեւեռել տալ իր ունի իր ամէն մէկ կարողութեանց և դոյութեան ամէն մէկ պայմաններուն վրայ , մէկ խօսքով՝ ցուցնել իրեն թէ «միայն հացով չէ՛ որ կ'ապրի մարդը» . վասն զի անասնական այդ պէտքը կրնայ իրեն նիւթական կեանքը ապահովել , բայց չկրնար հանել զինքը բարձրագոյն նկատողութիւններու :

Հարկ է զգացնել մանաւանդ բարի ժողովուրդին թէ՛ իր մշակած արտը ֆէր պարարտութեամբ չէ՛ որ կ'սնանի միայն , այլ ինչ որ վերէն կուգայ՝ արեւ ու անձրեւ՝ մէկուն ճաճանչներն՝ միւսին կաթիլներն կ'փխրեն իր ակօսները , կ'լեցնեն իր շտեմարանները :

Հազարումէկ պէտքեր կան , որոնց ամենքը կենսական չեն կրնար համարուիլ , արդար բաշխումի օրէնքն ալ չունենալով իրենց հետ . զի ինչ որ հարուստը իբրեւ պէտք կ'ստեղծէ իրեն՝ աղքատին տառապանքն է այն . բայց՝ առանց վաճառելու՝ կրնանք ըսել թէ կրօնական պէտքը՝ որ հասարակ է ամենուն՝ չա՛տ դիւրագոյն եղանակաւ կ'գտնէ իր գոհացումը . օգին ու լոյսին նման տիեզերական բարիք մ'է այն :

Հարկ է զգացնել ժողովուրդին թէ՛ կրօնք ձրի պարգեւ մ'է իրեն տրուած , թէ՛ այդ մթնոլորտին մէջ ուղածին պէս կրնայ շնչել ինքը , առանց ընդունելու կարծրացած կեղեւանքներ՝ նախապաշարումներ՝ որոնք բուն լոյսին ազդեցութեամբ պէտք է թօթալին , աւելի յստակ և աւելի պայծառ տեսութիւններ պարզելու համար հոգեկան նայուածքի առջեւ :

Պէտքերու կեղծիքներ ստեղծել և սաստկապէս լլկել ընկերական կեանքը՝ սխալ իմացուած քաղաքակրթութեան մը գործն է այն . կարկամ սեղմումներ տալ սրտին ու անոր զգացումներուն՝ սխալ իմացուած բարոյականի խտուրթիւնն է այն . հպարտութիւններն չեն մտքին ու անոր անկարգ շարժումներուն՝ սխալ իմացուած իմաստասիրութեան ոգին է այն . կապանքներ չինել հոգիին ու անոր ըզճանքներուն՝ սխալ իմացուած Աւետարանի մը կրօնքն է այն :

Թո՛ղով միւսներն՝ մենք ուժգնակի կ'ուզենք շեշտել՝ կրօ-

նական պէտքը , ա՛յն որ իր ուղիղ խմացումովն արդէն բուն բարոյականի շաւիղն ալ կ'ըմանայ մեր առջեւ լուսաւոր գիծերով :

Ո՞վ չէ համոզուած թէ այդ պէտքը կեղծիք մը չէ բնաւ , ո՛րչափ ալ անոր անունդ մատակարարող նիւթերն ամէն ատեն չ'ունենան նուրբ և կենդանի տարր մը իրենց մէջ , թէ հոգիին այդ ներքին աղագակը ախտաւոր գործարանաւորութեան մը վայնասունը չէ՛ , և թէ՛ ընդհակառակն՝ մարդ անո՛վ մանաւանդ իր էութեան հետ կրնայ հաշտուիլ , անո՛վ միայն ինքզինքը բարձր կը դնէ , վե՛ր՝ անցաւորէն ու անսանձականէն վե՛ր , ու անով կ'ներդաշնակաւորէ իր ամէն մէկ քայլերը զարգացման ճամբուն վրայ :

Ըսինք թէ շատ գիւրիւն պայմաններով կ'զոհանայ մեր կրօնական պէտքը . պարզ հաւատքին ու աղօթքին մէջն է ա՛յն : Ո՛չ հեթանոսութեան հարիւրեւնեան զոհի ճոխ հանդերձանքները և ո՛չ հրէական պաշտամունքի անհատնում պատուէրները քրիստոնէին ինկծը չեն կրնար բռնարարել իր փրկութեանը համար : Մեր հաւատքն է անշուշտ Աւետարանի՛նը : Անո՛րն որ մեզի հետ հաճեցաւ խօսիլ ու մի՛շտ պիտի խօսի . Անո՛րն որ իր գիտակցութեան յստակ շեշտերովն « զերկնաւորս » պատմեց մեզի . Աստուածորդւոյն հաւատքն է ա՛յն : Նա ինքը մեր աղօթքն ալ ամփոփեց քանի մը հրաշալի սուղերու պարզութեան մէջ , կրօնական պէտքին ամենէն սուր հնչիւնը դնելով մեր կուրծքին տակ , « Հայր մեր որ յերկինս ես » :

Տէրունական այդ աղօթքի ամէն մէկ միմունջներն մեր կրօնական կեանքի թիւերն կ'ըլորակեն . այդ խնդրուածներն օրօրացէն մինչեւ դերեզման՝ ու անկէ ալ անդին մեր անսահման իղձերն կ'հրահրեն :

Եւ ստուգի՛ւ , ամէն հասակի կրօնքն է դաւանիլ « Հայր մեր որ յերկինս ես » . բայց ամենէն աւելի մանուկին կրօնքն է ա՛յն , անուշակ բուրումներու մէջ ծածանող էակին . « Եյո՛ , և ամենէն աւելի կարծես ա՛ն ունի իրաւունք ըսելու Աստուծոյ . « Սուրբ եղեցի անուն քո » , կեանքի աղանդութիւններուն հետ դեռ չ'ափուած , դեռ երկնքին սուրբ կապոյտին սիրահար . բայց բուն այդ ներշնչումն է որ վառ պիտի պահէ անոր սրտին խորը իրերի ամէն սուտ փառքերէն ու խաբկանքներէն անջատ բարոյական տենչ մը , և իր պատանութեանը մէջ պիտի տայ զգալ իրեն՝ երկնքի թագաւորութեան հրապոյրը . « Եկեա՛ցէ արքայութիւն քո » :

Ահ եթէ մանուկին շուրջն ապրող անտարբերներ՝ սկեպտիկաներ զլանան անկէ իր ոսկի ժամերուն երկնային այդ վայրկեանը՝ իր հոգեկան ցնցումներուն այդ լուրջ ժպտալը, ա՛լ դժուար է որ կեանքի պատահարներուն հանդէպ՝ ուր յուսահատ հոգին կ'մաքառի՝ կամ շիրմի մը վրայ՝ հեծկլտալու տառն կամ մահիճի մը տառապանքներուն մէջ արիանայ այդ տղան՝ որ հիմա երիտասարդ մ'է՝ մրմնջելու, «Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի»։ Թողէք որ այդ գգացումներով աճի, մի՛ խափանէք իր մէջէն կրօնքին պէտքը, հաճոյքներուն ամենէն փրկարարը։ Քիչ մը վերջը ընտանիքի մը հայրն է նա, նոր յարկի մը տակ կ'ստորի, պղտիկներ ունի սնուցանելու համար, մեծ ճիւղերով պիտի պատրաստէ անոնց ապագան, բայց պիտի չզապրի իր քրտինքներն իրենց արժէքին վերածելէ. «Զհաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր»։

Դուցէ՛ ահամայ անկումներ օր մը պիտի գլորեն զինքը, բայց նա փոխանակ մեղկանալու՝ փոխանակ հեշտ գտնելու այդ տղմուտ գայումները՝ պիտի թօթուէ ինքզինքն ու պիտի դռչէ. «Թող մեզ զպարտիս մեր»։

Զրկանքներ պիտի կրէ շատերէն, դաւ, սպառնալիք, կոտուստ, բայց պիտի չմոռնայ իր ըսելիքը. «Որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։ Կեանքի կռիւներէն յոգնած պահուն ալ՝ նոր ոյժ մը պիտի ոգեւորէ զինքը երբ երկինքէն խնդրէ. «Մի՛ տանիր զմեզի փորձութիւն՝ այլ փրկեալի չարէն»։ Եւ եթէ երկրի վրայ բախտ չունենայ տեսնելու իր երազած «Աստուծոյ արքայութիւնը» որ հոգիներու անթարգմանելի խաղաղութիւնն է, ուրիշ կեանքի մը մէջ պիտի ցանկայ անոր. «զի քո է արքայութիւն՝ զօրութիւն և փառք յաւիտեանս»։

Դժուարին չէ հաստատել թէ այս տղամաղբու թիւններով օժտուած քրիստոնեան անհունապէս կ'լլցնէ իր կրօնական պէտքը, այդ կեանքով սկսած մանուկներն են Աւետարանին կանչած հոգիները, անո՛նք են Եկեղեցւոյն սիրած նուիրական անդամները, անո՛նք են ապականած ընկերութեան աղը, մթադնած մտքերու մէջ նշուող ճրագը. — Ո՞վ պիտի պատրաստէ այդ պիտիները։

Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԿՐԾՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՐ

ԱՌԱՆՅ կրօնի ազգ մը, ժողովուրդ մը չէ՝ ծաղկած դեռ երկրագունդի վրայ: Բազմաթիւ են ազգերն ու ժողովուրդները, բազմաթիւ են կրօններն ալ: Կրօններն ալ ազգերու պէս կեանք, գործանաւորութիւն, պատմութիւն ունին. կ'աճին, կ'ծաղկին, զիրար կ'զկեն կամ իրարու կ'յաջորդեն:

Ամեն ազգ բան մը կ'դնէ իւր ոգիէն իւր կրօնին մէջ. կ'ազգայնացնէ զանի: Տեղագրական պայմաններ, ըմբռնում, աւանդութիւն, մտաւոր զարգացում, այս ամենը եւ դեռ ի՛նչ որ համայնքի մը բարացուցականը կ'կազմեն՝ կրօնի վրայ կ'ապաւորուին իրենց կաշկառուն գծերով:

Այս իրողութիւնն նտեղծեց «Կրօնից Պատմութիւնը», որ դարուս է՛ն փայլուն մոգական լապտերն եղաւ լուսաւորելու անցած գացած դարերու զաղտնիքը, ուսումնասիրելու ոչ-քաղաքակիրթ ժողովուրդներու կեանքը, մէկ խօսքով, ըմբռնելու մարդկութիւնն իւր ապրած կեանքին մէջ: Որովհետեւ «Կրօնները», — ինչպէս կ'ըսէ ֆուանսացի խորհող մը, — մարդկային բնութեան ամեն չլուտ եւ ամենէն կատարեալ արտայայտութիւնն են»:

Մարդկութեան կեանքը կիսովի հայեցողական է: Մարդը ո՛ր դարու ալ պատկանի, զարգացման ո՛ր սանդղամասին վրայ ալ բարձրանայ, իմաստասիրական ո՛ր դպրոցի սկզբունքներն ալ զաւանի, միշտ վերացում մ'ունի նիւթէն վեր. վերացում մը, հայեցողականութիւն մը, իւր ամենէն ազնիւ միանգամայն եւ ամենէն խոշոր ձեւերով: Կրօնից պատմութիւնը տիեզերական հոգեբանութիւնն է մարդկային մտքի հայեցողութիւններուն, անոր սրտի տենչանքներուն, մա՛նաւանդ այն ձգտումին, որ բուն կրօնականացումն է անոր: — Զուտ կրօնական զաղափարին վրայ կ'իյսօսին եւ ո՛չ այս կամ այն կրօնի — : Կրօններու զանազանութիւնը ա՛յդ զաղափարի ըմբռնումին արտաքին եղանակաւորումներուն արդիւնքն է. ա՛յս է պատճառն որ կրօնը դարէ դար, ազգէ ազգ տարբեր երեւոյթներ կ'ընծայէ, դաւանանքի, պաշտամունքի առարկայները ժամանակ մ'այսպէս, ժամանակ մ'այնպէս ըմբռնուած են. ժողովուրդ մը բան մ'աւելցուցած է ա՛յդ ըմբռնումի վրայ կամ պակսեցուցած, ուրիշ ժողովուրդի մը մէջ բոլորովին այլափոխուած է ա՛յդ. նոյն իսկ անհատէ անհատ ըմբռնելու երանգ մը ի յայտ եկած է եւ ա՛յս միեւնոյն կրօնի մէջ:

Ի՛նչ որ, սակայն, հաստատուն է այդ բոլոր եղանակաւորումներու, այդ բոլոր երանգներուն մէջ, կրօնական զաղափարի բարոյականն է, լաւ եւս, կրօնի բարոյականը:

Դիտեցէ՛ր տիեզերական պատմութիւնը , հսկայ իրականութիւն մը կայ հո՛ւն — Մարդկութեան ըրած գոհողութիւնները կրօնի համար : Մարդիկ ամեն ինչ գոհած են պահելու համար իրենց կրօնը եւ մարդկային հանճարը իւր ամենէն հզօր եւ ամեն տեսակ արտայայտութիւններով մարմնաւորած է կրօնի գաղափարը : Գեղարուեստն իւր բոլոր ճիւղերով ամեն դար եւ ամեն տեղ իւր հրաշալիքները նախ կրօնական հաստատութիւններու վրայ փայլեցուց , ազնուացուց : Գեղանարարներ , գերեզմաններ , բուրգեր , արձաններ , եկեղեցիներ , մարդասիրական հաստատութիւններ՝ աշխարհի հրաշակերտներն են եւ հրաշակերտները կրօնին :

Ի՞նչ է այս անհուն դործունէութեան նպատակը . Ի՞նչու մարդկային միտքն իւր ազնիւ , հսկայ եւ բեղմնաւոր ոյժերը սպառած է իւր կրօնական ըղծանքները գոհացնելու համար . ի՞նչ է կրօնին ոյժն ու զաղտնիքը .

— Մարդն է ա՛յն ոյժն ու զաղտնիքը՝ ձկտումը դէպ ի կատարելութիւն , դէպ իտէպ :

Իրաւ է որ մարդը միշտ պիտի ձկտի , հասնելու պիտ՝ աշխատի դէպ ի կատարելութիւն , դէպ ի այդ իտէպը , որ նպատակն է յառաջդիմութեան , պիտի մօտենայ անոր , պիտի չհասնի սակայն : Յառաջդիմութիւնը պիտի դադրէր այդ վայրկեանէն եթէ մարդն յաջողէր ընդդիմել կատարելալը : Ընդհակառակը ձկտումն է , հասնելու տենչն է յառաջդիմութեան պայմանը : Եւ կրօններն են որ ամենէն գոհացուցիչ մեթոդներով կէտներ նշանակած են մարդու ըղծանքներուն : Զկտեցնել մարդը Կատարելային , վառել զանի յառաջդիմութեան եռանդով՝ կրօնի բարոյականն է այս : Եւ ա՛յն կրօններ որ ամենէն աւելի բարձր սկզբունքներ ունին , ներողամիտ են , իրապէս յաջողած են ա՛յս մասին : Դաւրուս բաղարակրթութիւնը ուրիշ իրողութիւն մը չկրնար ապացուցանել :

Կրօնը զգացումն է , գիտակցութեան կառավարած զգացումը : Մտքի ամենէն դրական զարգացումը չկրնար բնացնել զգացումը . աւելի կը նըբացնէ , կ'ազնուացնէ զանի : Միշտ պարապ մը կայ ամենէն բարձր մտքի եւ կատարելային մէջ . այդ պարապն է որ կ'լեցնէ կրօնը : Ինչ որ փիլիսոփայական դրութիւններ չեն կրնար ժողովրդեան մտոյնելի ընել հաւասարապէս , կրօնը , որ իւր փիլիսոփայութիւնն ունի , կրնայ ընել եւ շատ յաջող կերպով : Բարձրական ա՛յս գօրութիւնը զսպանակն է մարդկութեան , հոգեխօսական տենչանքներու ազդակ մը , որ իրարու կ'կապէ անհառները , աշգեղը՝ զաշնել տալով անոնց ըղծանքի միեւնոյն եղանակը :

Հոգեկան կործանում մը պիտի խանգարէր մեր կեանքի բովանդակ տնտեսութիւնը եթէ չունենայինք բարոյական ոյժը , որ վեր կը բռնէ մեզ նիւթական դժուարութիւններու խռնումին մէջ եւ դէմյանդիմանութեամբ (intuition) կ'յուսաւորէ մեր ձկտումները մտքի յամառումներուն հանդէպ :

Ինչպէս որ տիեզերքի կազմակերպութեան մէջ աւելորդ բան մը չկայ , ամեն շարժում , ամեն դադարում օրէնք մը նպատակ մ'ունի ,

նոյնպէս մեր գործարանաւորութեան հոգեխօսական եւ բնախօսական կազմակերպութիւններ նպատակ մ'ունին: Մեր մարմնի պէտքերը, մտքին յղացմանըն ու սլայքը, հոգիի ձգտումներն օրէնք մ'ունին, եւ օրէնքին առարկայները իրական են: Շատ բան կ'մտածենք, կ'յղանանք, ամենն ալ հիմի մը վրայ կը բարձրանան: Պատճառն ա՛յս է որ շատ անգամ երկրագունդի տարրեր գօտիններուն վրայ՝ անհատներ, ինքա՛մէ անկախ, միեւնոյնը կ'մտածեն, միեւնոյնը կ'գրեն, միեւնոյնը զաղափարը կ'արտայայտեն: Դիպուած չէ՛ այս երեւոյթը, այլ՝ իրականութիւն մը: Մարդոց արտադրած բոլոր հրաշակերտներ, զիւտեր, քաղաքակրթութիւններ, ամենն ալ պարփակուած են մարդում, այսպէս է կրօններու զաղափարն ալ. այսինքն՝ պէտք մը, անհրաժեշտ պէտք մը ապրելու համար:

Ապրելու պայմանները միշտ դիւրատար չեն. կեանքն անտանելիքնող իրողութիւններ միշտ զբաղեցուցած են մարդկութիւնը: Վատագոյնը կապարեայ անուրով մը պիտի խղդէր կեանքը - կեանք մը, որ ժպտուն կողմեր ունի, առաւօտ մը ցօղակութիւնով, արեւ մը պայծառ. ա՛յս կեանքը պիտի խղդէր եթէ կրօնի բարոյականը չգօրացնէր զանի:

Բարեկեցութեան աղբիւրները կրնան ցամայիլ հարստութիւնը կրնայ իւր վերջին բարեւը տալ շատ մ'անհատներու, բայց անոնց համար սփոփանքի ալը միշտ կ'հոսի վճիտ կազդուրումի մը զովագումներով:

Մարդկութեան տառապանքը բազմադիմի ելեւէջներով ծանրացած է. եւ կ'տեսնեմ կրօնից պատմութեան մէջ թէ միայն կրօնի բարոյականը իւր զանազան ըմբռնումներով տիեզերական դարման մ'եղած է աւտը:

Մարդը իւր հիւժումներուն մէջ մըմունջ մ'արքիւռեան, իւր վնասողումներուն մէջ ճիչ մ'յուսալից, իւր կորուստներուն մէջ շեշտ մը աղօթքի կ'բարձրացնէ դէպ ի երկինք: Այս կէտերը կեանքին մէջ բարոյական ամենէն զօրեղ, ամենէն անկեղծ, եւ ամենէն բեղուն հանգրուաններն են թէ՛ հանգիստ, թէ՛ խոնջած մարդուն համար:

Կեանքի հոգեխօսական փուլումները կանգնել, կատարեալին, իտէալին ձկտելու խանդավառումը տարցնել՝ բարոյական աշխատութիւն մ'է: Կրօնը կ'մասնակցի այդ աշխատութեան, իւր մասնակցելու միջոցներն անկեղծ են եւ բանաւոր:

Կրօնի բարոյականը մարդու բարոյականն է. եւ կրօնը բանաստեղծութիւնն է հոգիին:

ԲԱՌԱԿՆ Վ. ԱՌԻԼՍԻՐՅԱՆ



ԿՈՐԶՈՒԱԾ ՀԱՍԿԵՐՆ

ՃԱՇՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՅ ՄԱՏՅԷՈՍԻ (ԺԲ. 1 — 8)

« Յայնժամ զնաց Յիսուս ընդ արտորայնն նոցա ի շաբաթու, եւ աշակերտքն նորա քաղցեան եւ սկսան հասկ կորզել եւ ուտել : »

Ներկայ հատուածն՝ որ երեք խմբադիր Աւետարանաց մէջ եւս յիշուած կը գտնենք, ցոյց կուտայ մեզ Աւետարանի պաշտպանութիւնն իւր հակառակորդ փարիսեցւոց դէմ, որոնք ամեն կերպով կ'ջանային եղծել և առ ոչինչ համարել Քրիստոսի վարդապետութիւնն:

Յիսուս շարաթօր մը իւր աշակերտաց հետ ճամբորդութիւն ըրած միջոցին արտերու մօտէն կ'անցնի: Իւր աշակերտներն կարի նօթի և դրէթէ նուազեալ վիճակի մը մէջ գտնուելով, կ'սկսին ցորենի հասկեր վրայնել և ընդ ալ չիւնելով ուտել: Յիսուսի աշակերտաց այսք ընթացքն ու է գիտողութեան մը տեղի չէր կրնար տալ, զի ըստ Մովսիսադիր օրինաց, այդ ոչ գողութիւն էր և ոչ ալ յափշտակութիւն, «Եւ եթէ մօտնիցես ի հունձս ընկերի քո, քաղեսցես ձեռօք քովք զհասկն, և մանդաղ մի՝ արկանիցես յոճ ընկերի քո» (Երկ Թբեմ ԻԳ. 24): Ուրեմն, փարիսեցիք ուրիշ միջոցի մը պիտի դիմէին Յիսուսի աշակերտներն մեղադրելի և օրինազանց համարելու համար: Ահաւասիկ իրենց բողբոքն և գիտողութիւնն:

«Փարիսեցիք իբրեւ տեսին, ասէն ցնա, Ահաւասիկ աշակերտքն քո դործեն զոր ոչ է արժան դործել ի շարաթու:»

Փարիսեցիք՝ Յիսուսի աշակերտաց ընթացքն մեղադրանաց արժանի կ'սեպեն, զի անոնց ըրածն պարզապէս դործողութիւն մը կատարել էր, որ կ'հակառակէր շարաթու պահպանութեան: Բայց, սէտք է գիտնալ, թէ փարիսեցիք բաւական

ճշդութեամբ կը պահէին իրենց հանգստեան օրերն , յորս ներքելի չէր մինչեւ իսկ բարեգործութիւններ ընել և անհրաժեշտ աշխատութիւններով զբաղիլ : Քրիստոս կը համառակի այդ հրէական բռնադրօսիկ մեկնութեան և կ'ուսուցանէ , թէ օրէնքն մի միայն աշխատութիւնն կ'արգելու , և ոչ երբեք բարիք մը գործելն և անհրաժեշտ պէտքէ մը զրկուիլն , և այս սկզբունքն անոնց մտաց մէջ հաստատելու համար յառաջ կ'ընէր զպատմական ճշմարտութիւն մը :

«Եւ նա ասէ ցնոսա , Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր զոր արար Դաւիթ , յորժամ քաղցեաւ , և որ ընդ նմայն էին : Զիա՛րդեմուտ 'ի տունն Աստուծոյ և եկեր զհաց զառաջաւորութեան , զոր ոչ էր օրէն նմա ուտել , և ոչ՝ սրոց ընդ նմա էին , բայց միայն քահանայից» :

Յիսուսի յառաջ բերած այդ միջանկեալ հատուածն՝ շաբաթու պահպանութեան վրայ չ'կրնար առնուիլ և ոչ ալ՝ բարոյական սկզբունք մը հաստատել , այլ նմանութիւնն երկու պատուիրանաց միջեւ է : Դաւիթի և իւրայնոց օրինակն ստիպողական և հարկաւոր պէտքի մը առջեւ խոնարհիլն է : Ըստ Ս . Գրոց , Դաւիթ և իւրայինք օր մը կուգան ի Նոմբա , առ Աքրմելէք քահանայ և անոր կը յայտնեն իրենց անօթի լինելն , և անդ ուրիշ ուտելիք չ'գտնելով կ'ստիպուին առաջաւորաց հացէն (*) ուտել , զոր ըստ օրինաց մի միայն քահանայից ներեալ էր ուտել : Քանի որ Դաւիթի այդ ընթացքն անմեղադիր համարուած էր , զի բնական պէտքի մը առաջն առնելոյ համար էր , իւր աշակերտոց ընթացքն ի՞նչպէս կրնար պարտաւորիլ և յանդիմանուիլ , քանի որ անոնք ալ Դաւիթի նման նուազեալ վիճակի մը մէջ կ'գտնուէին և իրենց կազդուրման համար կերած էին այն հասկերէն , որոնք ըստ օրինի ներեալ էին : Յիսուս իւր հակառակորդաց խնայեցնելով , թէ իւր աշակերտք բնական հարկի մը դոհացում տալու համար հասկերքաղած էին , այժմ կուգայ զանոնք յանդիմանել , ըսելով

(*)- Առաջաւորութեան հացը , եբր- «հաց երեսաց» թուով 12 հատ էր եւ կ'մնար տաճարին մէջ Սրբութիւն կոչուած տեղը ոսկեղէն սեղանի մը վրայ : Բաց ի քահանայից ոչ որ կրնար ուտել այդ Աստուծոյ նուիրեալ հացը :

«Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս , զի 'ի շաբաթս քահանայքն ի տաճարին պղծեն զշաբաթն և անմեղք են : Բայց ասեմ ձեզ , զի մեծ քան զտաճարն է աստ» :

Յիսուսի յառաջ բերած այս նոր փաստն ուղղակի կ'վերաբերի շաբաթու հանգստեան պատուիրանին , որովհետեւ օրէնքն կ'իթոյլատրէր քահանայից կատարել իրենց օրինական լուսցումները , եփել նուիրական հացը , զենուէլ զոհելի անասունները , որոնք ուրիշ օրերէ աւելի բաղմամբիւ էին : Քանի որ քահանայք այս ամենը կատարելով հանգերձ անմեղ էին , զի տաճարին հարկաւոր պէտքերն կ'պատրաստէին , որոնք պատուիրեալ էին նոյն իսկ Աստուծմէ , իւր աշակերտաց արարքն լինչպէս կրնար մեղադրուիլ , ո՞չ ապաքէն ինքն տաճարէն մեծ էր : Եթէ օրէն է քահանայից շաբաթ օրը դուրծել ի սպաս տաճարին , ո՞րչափ եւս առաւել ներեալ էր իւրացնող դուրծել իւր սպասարկութեանը համար :

Քրիստոս աստի դերազանց բարոյական մը ի վեր կը հանէ , որ է

«Եւ եթէ գիտէիք զինչ է զոգորմութիւն կամիմ ոչ զդոհ , ապա ոչ դատաւարակիք դուք զանպարտսն» :

Բարոյականի այս դեղեցիկ սկզբունքն 'ի կանուխ ժամանակաց հետէ բանաձեւուած էր 'ի ձեռն Ուխտաց մարդարէի (Ձ. 6) : Յիսուս այսու կուղէ ցոյց տալ իւր հակառակորդաց թէ ինքն եկած է քարոյել ողորմութեան և գթութեան օրէնքն , և միանգամայն իսպառ բառնալ հին ուխտի օրէնքն , որ արտաքին զոհերու օրէնքն էր : Ապաքէն մարդարէին այդ գուշակութիւնն շատ լաւ կը նկարագրէր Իսրայէլի ժողովրդեան բնախօսական և հոգեխօսական կրկին վիճակներն : Վասն զի անոնք լսի արտաքին կերպարանին վրայ յենլով զանձինս օրինապահ և ճշդապահ կը համարէին , մինչ ներքնապէս անտեղեակ և անհմուտ էին Աստուածային կանոնաց : Եթէ արտաքնոյն հետ ներքինն համընթաց և զուգընթաց դնացք մը չունենայ , լինչպէս կարելի է որ օգտուի և զգալի փոփոխութիւն մը կրէ այն , որ շարունակ կ'հեծէ և կ'ճնշուի այն ծանրածանր բեռին ներքեւ , ուստի իրեն ո' և է բարերար և փրկարար ազդեցութիւն մը չ'դար , և ո' և է փոփոխութեան մը չ'ենթարկուիր իւր տառապեալ և հիւժեալ անձն :

Հրէայք՝ եթէ գիտնային , թէ ողորմութիւն պատարագէն աւելի մեծագոյն էր և զոհէն աւելի հաճելի էր Աստուծոյ , յանի-րաւի չէին դատապարտեր Յիսուսի աշակերտներն , որոնք մարդկային ընկերութեան հոգեւոր փրկութեանը համար անթի-թի կ'ըջնէին Յիսուսի հետ և այն ալ անտրտունջ , որպէս զի յետոյ զանոնք կերակրեն հոգեպարար և կենսատու հացով : Յիսուս այս միջադէպն կ'ընէ հետեւեալ խօսքերով ,

«Զի տէր է շարաթու Որդին մարդոյ» :


Յիսուս արդէն սա ընդհանուր ճշմարտութիւնն դրած էր իւր հակառակորդաց առջեւ , թէ «շարաթու մարդուն համար եղաւ , և չէ թէ մարդը շարաթին համար» : Ըստ այսմ , մարդն աւելի պատուական լինելով քան զշարաթն , հարկ է որ շա-րաթն տեղի տայ մարդուն հարկաւոր և անհրաժեշտ պիտոյլոյ : Եւ եթէ , շարաթու պահպանութիւնն 'ի պէտս և 'ի շահ մար-դուն հաստատուած է , ո'րչափ ևս առաւել պարտի հնազան-դիլ անոր , որ Տէրն է շարաթուն , զի իւր իշխանութեան ներ-քեւ ունի այս սահմանադրութիւնը : Որով՝ դժուարին չէր զայն հաստատողին և միանդամայն իրաւունք ալ ունէր զայն ջնջե-լու , փոխելու ըստ հաճութեան իւրում :

Յիսուսի և իւր հակառակորդաց միջեւ տեղի ունեցած այդ անհամաձայնութիւնն և աններդաշնակութիւնն , գեղեց-կապէս կը պատշաճի և մեր դարուն , ինչպէս նոսիւ ամեն դարերու մէջ տեղի ունեցած գաղափարաց : Վասն զի խու-ժանն լոկ արտաքին երեւոյթէն և փայլէն խափուելով ամեն օգտակար և գեղեցիկ սկզբունքներն չ'ուզէր ընդունել , այն վտահութեամբ , թէ հինն աւելի պատուաւոր և յարդի է :

Այդ պիտիներուն առջեւ կը դնենք Յիսուսի այն ընթացքն , որ ըստ ժամանակին փոփոխութիւններ և նորութիւններ մուծած է յայնս , որոնք իրենց գոյութեամբն մարդկային ընկերու-թեան վիճակն կրնային բարւոքել և նախանձելի 'ցոյց տալ , մինչ առաջինք մահացնելէ և սպաննելէ զատ ուրիշ բան մը չէին կարող ընել :

ԽՈՍՏՐՈՎ , Վ .

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ



Մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ գլխաւոր տեղ մը կը զբաւէ իւր հանձարով ու գործով, ներկայանալով աշխարհական ու եկեղեցական երկու գէմքերու տակ:

Մեծն Ներսէս որդի է Աթանաղինէի և թոռն Յուսկան, բողոքովին հակապատկերն է իրեն հօր բարուց ու վարուց, աւելի իւր վերայ՝ ցոյց կուտայ իւր հաւուն նախանձայոյդ ուղին: Պարթեւական տան հարց հետեւողութեամբ իւր նախնական դաստիարակութիւնը և կրթութիւնը առաւ Կեսարիոյ մէջ: Նա դուրի չ'մնաց ընտանեկան կեանքէ. փեսայացաւ Մամիկոնէից տան, իր Սանդուխտ կնոջմէն ունեցաւ Սահակ Պարթեւը: Երկար չ'տեւեց այդ կեանքը Սանդխտոյ մահուամբ. ձգեց ընտանեկան բնակարանը և Արշակայ քով ծառայութեան մտաւ: Այդ վիճակին մէջ պատմութենէն չունինք մի մասնաւոր յիշատակութիւն. անոր ամբողջ արդիւնաւոր կեանքը Եկեղեցական սքեմի տակ է:

Աթանաղինէի որդին իւր աշխարհական տարազով ներկայ է Մեծ համաշխարհական ժողովոյն. երկրին բազմը որոշող ժողովականներուն աչքը կ'իկեղրոնանայ Պարթեւահասակ, քաջաբանութեամբ երիտասարդին վերայ, որ Ս. Գրիգորի թոռան թոռն էր, հոյակապ տոհմին զաւակը կ'ուզէն հեռացնել իւր նախնական վիճակէն և ծածկել անոր անձը Աքեմի ծանրութեան տակ, պաշտօնը դժուար և յանձնառութիւնը ծանր կուգայ առողջ երիտասարդին, բայց Աւետարանի բարիքը և Եկեղեցւոյ ու ժողովրդեան սէրը յաղթող կ'կանգնին այդ դժուարութեան: Ներսէս կ'զիջանի ժողովականաց խնդրանքին. կ'թողու իրեն պաշտօնին սեպհական եղող տարազն ու կ'առնու խաչը և համեստ գգեստը, կը խուզէ իւր գեղեցիկ մազերը, և կ'առնու սեւ քօղը: Այդ պարագայն պատմութեան մէջ սքանչելի է իւր պարզութեամբ:

Կաթողիկոսական ձեռնադրութիւնը Կեսարիայէն առաւ

նախկին սովորութեան մը համաձայն . ճանապարհորդութեան հանդերձանքն ու պատրաստութիւնները շքեղ են և վայելարժանաւոր հովուի մը :

Ներսէս Եկեղեցական սեւ քողին տակ նուազ եռանդնոտ չէ . իւր ազնուական ու վեհ ոգին կենդանի է սրտին մէջ : Նորա շէշտերը ազդեցիկ են բարոյականի պայծառ քարոզութեամբ . Դաւթի մը հանդէպ Նաթանի խրոխտանքով կ'իկենայ և Նպատ լերան վերայ Մովսիսի դիրքով: Աւետարանը իր բոլոր մասերով ճշմարիտ ճանապարհ կ'նկատէ , և միակ արդարանալու միջոցը : Ճշմարտութեան քարոզիչը անտանկի կ'դառնայ շատերուն և կ'ընթերցանենց վէս գլխոց , իւր առաջին օրուան յայտարարութեան համաձայն: Այս ամեն բարոյական հանդամանքներով հանդերձ չ'ձգեց ձեռքէ , երկրին ժողովրդեան կրթութիւնը :

Մեծն Ներսէս իւր ստանձնած պաշտօնին մէջ հաւատարիմ էր , իւր սերունդին սեփական պաշտօնին մէջ երկրորդ բարեկարգիչ մը եղաւ : Ս . Գրիգոր Եկեղեցին նորոգեց հին կրօնքին ամենէն ծանր հարուածը ապով . իսկ Ներսէս յետ իւր Մեծ հաւոյն գէշ սովորութիւններ արմատախիլ քրաւ : Յունական կրթութեամբ պարագուած միտք մը չկասեցաւ բնաւ եկեղեցին բարեկարգ վիճակի մէջ դնել , հաստատելով կանոններ ու աղօթքներ : Քրիստոնէական բարեպաշտութեան հետ մաքրի վարդապետն պարտաւորիչ քրաւ , և կրթութեան սէրն աւելցուց . մէկ խօսքով Ներսիսի դարը ծնաւ «*սկիզբ*» իւր բոլոր բարձրութեամբ , անոր համար պատրաստեց երկու մեծ մրաքեր Սահակ և Մեսրոպ , որոց արդիւնքն ակներեւ է : Մեծ հայրապետին ամեն գործերուն մէջ կը անսնուի անոր հոգւոյն բարձրութիւնն ու վեհութիւնը . նա բնատենեկան յարկի սրբութիւնը նուիրագործեց որ այնչափ թուլցած էր մեղկ միջնաբերդի մը տակ : Պատասպան եղաւ բոլոր թշուառներուն . աղքատին տուն տուաւ , որրին արցունքը սրեց , այրին մխիթարեց , հիւանդը խնամեց , աղքատը կերակրեց : Մեծ մարդը երկոտաարդ գործեց և երկոտաարդ մեռաւ . ամեն բանի մէջ խանդ ու եռանդ ներշնչեց , Աւետարանի բարոյականի ճշմարիտ մարտիրոսն եղաւ :

Ա.Գ.Ա.Ն Վ.



Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

Հրապարակային աղօթքի կարեւորութիւնը ամէն կրօնի մէջ ճանչցուած է : Հաւատակից եղբայրներն բնական միտում մ'ունին միշտ մէկտեղ հաւաքուելով օրհնութիւններ վերառարելու իրենց Աստուծոյն , և այդ միտումին համակերպած են կրօնքի հիմնադիրներն բնաւ արդելք չդնելով կրօնական համախմբութեանց , այլ մանաւանդ զանոնք նկատած են ընդհանրապէս շինիչ , և բազում պարագայներու մէջ՝ անհրաժեշտ :

Այս աղօթակից կրօնակիցներուն ջերմեռանդութեան թելադրիչ և առաջնորդ մ'ըլլալու համար կրօնական հայրերն և կրօնական իրաց մէջ հեղինակութիւն ունեցող անձերն զանազան ժամանակներու մէջ յօրինած են աղօթքի այնպիսի բանաձեւներ որ կրնան ամէն մարդու սրտին և զգացումներուն թարգման հանդիսանալ Ամենակարողին առջեւ :

Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ այս տեսակ աղօթքի գլխաւորն՝ նոյն ինքն Տէրն մեր Քրիստոս յօրինեց և սորվեցուց իւր աշակերտներուի : Հոչ Բերք՝ քրիստոնէական ամբողջ հաւատքն ու հոգին կ'ըմբռնեցաւ , որուն կարծես բացատրութիւն մ'է Ընթրեաց օրը , սեղանէն անմիջապէս յետոյ , Յիսուսի մատուցած այն գեղեցիկ աղօթքն (Յովհ. Ժէ.) որ յուզեալ ու տագնապեալ, բայց անվեհեր ու զգայուն սրտի մ'ամենէն բռուն արտայայտութիւնն է :

Առաքեալները իրենց վարդապետին այս օրինակին հետեւեցան , և բաւական ժամանակ հաւատացեալներուն հետ համախմբեցան հրէական տաճարներուն մէջ

իրենց աղօթքը հրապարակաւ մատուցանելու համար , առանց երբեք խղճելու : Պօղոս՝ իւր հաւատացեալ եղբայրներուն կ'յանձնարարէր հրապարակային աղօթքը , զայն նկատելով խրատիչ և դէպ Աստուած ուղղիչ (Եփես . Ե . 19 , Կոր . Գ . 16) , որ ո՛չ այլ ինչ էր եթէ ոչ , սաղմոս օրհնութիւն և հոգեւոր երգ :

Այս էին արդարեւ առաջին դարերու հաւատացեալներուն աղօթքն , դրեթէ ամենքն ալ Մեծ Սաղմոսերգուն ու նախկին ընտրեալ ժողովուրդին մարգարէից գրչին արդիւնք : Միմիայն քանի մը դար ետքն է որ իւրաքանչիւր եկեղեցի կ'սկսի փոխակերպել նախնեաց այրտովորութիւնը , և եկեղեցական պաշտաման կամ հասարակաց աղօթքին մէջ կ'մտնեն նաեւ Առաքելադործ հայրապետացու հոգեշունչ վարդապետաց երկխղած մարին ու մարութիւն հոգեւոյն յայտարար հաստատմանը : Այսպէս զգալի կերպով հիմն կը դրուի այն աղօթադրաց որ առաւանդն քրիստոնեայ եկեղեցիներուն մէջ ընդունուած են դրեթէ իրբեւ միակ միջոցն որով կարելի է հաղորդակցիլ երկնից հետ : Հրապարակային պաշտամանից այս աղօթադրքն կ'կոչենք մենք ԺԱՄԱԳԻՐԻՔ :

Գրքին անունը բաւական է արդէն իւր պարունակութեան վրայ գաղափար մը տալու : Գէշ մ'է այն որ կ'բովանդակէ աղօթքի ամեն փոփոխութեան ամբողջական պաշտամունքը : Բայց կ'երեւի թէ այդ անունը յետագայ դարերուն մէջ միայն տրուած է անոր և իսկապէս պէտք է կոչուէր «Նարգաւորութիւն Հաւարակաց աղօթից» , որպէս կ'զաննէր մեր ամեն ժամերգութեանց վերնագրին մէջ :

Ժամագրքին կամ հասարակաց աղօթից կարգաւորութեան այն կազմութիւնը որ ունինք այսօր մեր ձեռքը , քանի մը դարերու և ընտրեալ հայրապետներու գրչին կ'պարտինք՝ սրանցմէ մէկ քանին անոր ճակատը կ'զաննէր յիշատակուած : Ոսկեդարուն մէջ դրուեցան անոր հիման քարերը և ԺԳ դարուն մէջ միայն կրցաւ նա

իւր վերջնական կերպարանքն առնուլ։ Մեր ազգային կրօնական կեանքին մէջ երեւցող ամենէն ամբիժ և ճարտար ձեռքերն զետեղած և օրհնած են անոր անկեան քարերը և մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ երեւցող ամենէն փայլուն անձնաւորութիւններն կառուցած ու բարձրացուցած են անոր շէնքը։

Ս. Սահակի և Ս, Մեսրոպի անուններն, որ կ'ներկայանան անոր ճակատան իբրեւ հեղինակ, ինքնին երաշխիք մը կրնան ըլլալ ազգային եկեղեցւոյ բոլոր զաւակաց համար, այդ դիրքը ազգային-կրօնական զգացմանց աւանդարան մը համարելու։ Եւ կարծես, ապագայ դարերուն մէջ աշխարհն յաւերժման ընդունելով հանգերձ ժամագրքին ճակատը այդ երկու անուններն բարձր ի գլուխ պահելու փոյթ մ'եղած է ամեն հայրասէր զաւակաց կողմէ, չուղելով նաեմացնել զանոնք կամ նուազեցնել անոնց հեղինակութեան յարգը, ուրիշ անուններու յաւերժման Գլուխ և Յովհ. Մանգակունի Կաթողիկոսներուն անուններն իսկ թերեւս անդ տաւրիներու գրծկամակէր ապագայ սերունդը եթէ ասոնք այդ երջանկայիշատակ հարց աշակերտներէն ըլլալով անոնց անուններուն տաւրի փայլ մը չաւելցնէին։ Փառազիրքը մշտնջենական արձան մը կանգնուած է ուրեմն հայ երախտագիտական զգացմանց կողմէ, այդ երկու վեհ անուններուն անմահ յիշատակին։

Բայց երբ այսպէս այս դիրքին հեղինակութեան մեծագոյն բաժինը կ'հանենք մեր գրականութեան և եկեղեցւոյ պատմութեան մէջ երեւցող, եթէ կարելի է ըսել, այդ երկու արեղակներուն և անոնց շողջողուն արբանեակներուն, պէտք չէ մոռնալ որ անոնց արժանաւոր զաւակներէն ալ կան մէկ քանիներ որք իրաւունք ունին, եթէ ո՛չ հաւատար բաժին վայելելու անոնց հետ, գէթ իրենց անունն ալ օրհնութեամբ յիշուելու։

Այս արժանայիշատակ անձնաւորութիւններէն մին է Յովհաննէս Գ. իմաստասէր Կաթողիկոսը։ Սա՛ ե. դա-

ըէն ի վեր սկսած և հետզհետէ յաւելումներ ընդունած եկեղեցական ժամերգութեանց վերջնական կարգաւորութիւն մ'ըրաւ , անշուշտ զեղծումներուն և անկարգութիւններուն առաջին առնելու համար : Օձնեցի հայրապետն այս կարգաւորութիւնը իւր առաջին ժողովին (718) հաւանութեամբ ամբողջ ազգին ներկայացուց ի դործադրութիւն , ժողովական ութ կանոններով (կանոնք թիւ . — Ին .) ինչպէս որ ալ ընդունուեցաւ և գրեթէ անխախտ պահուեցաւ մինչեւ ցայսօր առանց երբեք փոփոխութիւն մը կրելու , ի բաց առեալ ՚ն . Շնորհալի Հայրապետին կողմէ անոր մէջ մուծուած յաւելումներն . որք մեծ մասամբ ճարտարահիւս երգեր եւ իրենց հեղինակին ինքնաբոյս հանճարին պատուաբեր և անուանն օրհնութիւնաբեր :

Ազգային այս երկու մեծ անձնաւորութիւններէն զատ կան տակաւին մեր Հայրերէն շատեր որք նոյնպէս ձգած են իրենց հանճարին լուման ազգային-եկեղեցական ոգւոյ այս փոքրիկ բայց թանկագին պարունակութեամբ գանձարանին մէջ :

Գանձարան մը , արդարեւ , որուն սրարունակած մէն մի իրը Հայուն սրտին ամենէն մօտիկ ու սիրելի յիշատակներ կ'արթնցնէ , և իւրաքանչիւր տարրը գրոշմն կ'կրէ Հօր մը ձեռքին որուն համար երախտագիտական զգացումներով լեցուն են այսօրան դարերաւ զուակայ սրտերը :

Ժամագիրքը , Աղօթագիրք մ'է և աւելին : Հայ կրօնական հանճարներու աւանդարան մ'է այն , և մեծադոյն մատենագիրներու գեղեցիկ դրուածներէն Հոգեւոր Կարգաւորութիւն մը :

Ժամագիրքը կ'պարունակէ այն աւանդին ամբողջութիւնը որ միայն կրնայ անկորուստ մնալ մեզի :

ՓՈՔՐԻԿ ՔԱՐՈՉ

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՆԻ ԶՈՉ

«Եթէ գիտէիք զի՞նչ է ողորմա-
ծիւն կամիմ եւ ո՛չ զզոն, ապա ո՛չ
դատաւարաւիք զանպարտսն:»

ՄԱՏԹ. ԺԲ. 7

Իտրայէլի կրօնական պատմութեան էջերն շատ ան-
գամներ պղծուած կ'դռնենք կռապաշտական նոր սովո-
րութեամբ մը, Նհովայի պաշտաման շարունակութիւնը
խզուած է հան այս կամ այն իշխանութեան ձեռքով:
Փիւնիկեան կամ եգիպտական պաշտամունքները պաւած
են ճշմարիտ Աստուծոյ սեզանը. բարձունքները զարդա-
րուած են լիախ աստեղով, ու անտառներն (Աստարդէ)
մասնաւոր հրապոյր մ'զգեցած՝ յեղյեղուկ հրէին հա-
մար, որ ամէն գաղափար, ամէն սկզբունք հեշտեաւ
կ'զոհէր սնոտեաց գաւանանքին: Բայց ամէն անգամ որ
այդ սրբապղծութիւնը կ'գործուէր Աստուծոյ ժողովրդի
հոգին վրայ, մարդաբէ մը գուրս կ'նետուէր իր միայ-
նութեան խորէն, ու վիրաւոր ոգիի մը տէս կ'արտաս-
ուէր, կերգեր Նհովային փառքը, կ'սղադատէր, կ'ըս-
պառնար, մաքառելու համար կռապաշտական հեղհեղին
գէմ ու նորէն հաստատելու Նհովային սեզանը:

Նհովայի այդ սեզանն իր վրայ ունէր ողջակէզներ,
խաղաղութեան կամ մեղաց զոհեր, որոնց ճենճերումը,
խունկերու բոյրին խառնուած, ժողովրդեան հոգւոյն կը
ներշնչէին ներման ու խաղաղութեան գաղափարները,
վայրկենապէս Քահանայն սեզանին ծխական արարո-
ղութիւններուն մասնաւոր ուշադրութեամբ կը հետեւէր:

թէ եւ , բայց ամէն ինչ արտաքինյարդար վաղ մ'ունէր լոկ : Այդ զոհերու նպատակը՝ տեսակ մը անձնահաճ փառասիրութիւն՝ արդար զայլոյթը կ'զրդուէր ամէն տնոնց , որոնք կրօնի հիմն , ու հաւատքի , սիրոյ եւ ոգորմութեան էութիւնն ըմբռնած էին : Աստուած ինքնին հաշտ աչքով չէր դիտէր այդ զոհի սեղանները , զըռանք կ'զգար ա'յն խուռկերէն , որոնք շատ անգամներ արիւնոտ ձեռքերէ կ'նուիրուէին , եւ սլիզ կ'նկատէր ամապլուխներու եւ շաքաթներու տօնախմբութիւններն , որոնք կ'գումարուէին իրր վաղուն , յաղթանակ մը՝ անխրաւութեան ու զրկանքի : Այդ հրէական ծիսապաշտութիւնն իր դադաթնակէտին հասած էր , երբ Նսայի եւ Ովսէէ իրենց ձայնը բարձրացոյցին սիրոյ ու մարդասիրութեան կրօնին հիմը դնելու համար : Նսայի , իբրեւ Աստուծոյ մեծ պատգամը , կը յանդիմանէր իր ծիսապաշտ ժողովուրդը , Բարձրելոյն կողմէն ըսելով անոնց թէ , «յագեալ եմ ողջակիզօք խոյոց ձերոց , եւ զճարպս գառանց , եւ զարիւն ջուլց եւ նոխազաց ո'չ կամիմ» (Նս. Ա. 11) : Եւ միւս կողմէն Ովսէէ կատարելապէս ներշնչուած ու կատարելապէս դիտակ կրօնի հիման , «զողորմութիւն կամիմ , կ'ըսէր , եւ ոչ զպատարագ» : Այդ օրէն երկու հարիւր տարիներ վերջ նոյնը կրկնեց Միքիա Մարգարէն , այն ժողովուրդին , որ իւր նիւթապաշտ արարողութիւններուն մէջ խորասուզուած , չէր մոռնար իր խուռկն ու աղը : զոհն ու ողջակէզն , առանց կարենալ ըմբռնելու արդարութիւնը , իրաւունքը , հաւատքը , սէրը , ողորմութիւնը , որոնք մարգարէներու շրթանց վրայ միայն կ'թրթռային :

Բ.

Շաքաթ օր մըն էր . հասուն հունձքերու արտի մը մէջէն առաքեալները իրենց տիրոջ կ'հետեւէին : Անօթութիւնը կ'լլկէր զիրենք : Առաքեալներուն վարանոտ ձեռքերն կ'երկարին այդ հասկերուն , անոնցմէ կ'որդելու :

և ուտելու համար, ու ահա նորէն ֆարիսեցիները, որ այդ անձնուրաց խումբին դէմ կ'եննեն, Տրտունջներն ու գանգատները կ'շատնան անոնց կողմէն, որոնց գաղափարով առաքեալներուն անխորհուրդ յանդգնութիւնը պղծած էր շաբաթու սրբութիւնը: Անքաւելի յանցանք մ'էր ճշմարտութեան առաքեալներուն համար արտաքին ձեւերու պահպանողականութեան մը շրջանակէն դուրս ելնել, ու սրբարութեան գաղափր համար հասկ կորզելը:

Փարիսեցիներու սաղառնքը մէկ վայրկեանի մէջ առիթ կուտայ Քրիստոսի, անցնիլ դարերու խորէն, անոնց առջեւ դնելու համար Աստուծոյ ձայնին է՛ն մեծ յայտնութիւնը, և ողորմութեան կրօնին է՛ն վաղու արտայայտութիւնը, և ըսելու անոնց, թէ «եթէ զիտէիք զինչ է զողորմութիւն կամիմ և ո՛չ զդոհ, ապա ո՛չ դատապարտէիք զանպարտսն»:

Ողորմութեան և զոհի գաղափարներուն այդ իրարու բաղխումը Քրիստոնէութեան հոյակապ յաղթանակներէն մին եղաւ, ջնջել ինչ որ արտաքին է սոսկ, ինչ որ շոշոկանքի համար, և մարդուն մէջ արմատացնել սիրոյ և ողորմութեան սկզբունքները: Ասի անհրաժեշտ պէտք մ'էր Քրիստոսի ժամանակ, երբ արդարութեան ամէն պայման ձեւերու կապուած էր, աւանդական նուիրականութեամբ: Ասի անհրաժեշտ պէտք մը պիտի ըլլայ ամէն ժամանակի, քանի որ անհնար է մարդուն մէջ խեղդել ուրիշին զնասելու անիրաւ տենչը: Եւ յորանի ողորմածաց զի նոքա ողորմութիւն գտցեն խօսքը, Քրիստոսի կրօնին սկիզբն ու վախճանը պիտի ըլլայ: Ողորմութիւնը, քրիստոնէական ըմբռնումով, քաղցրաբարութեան կատարելութիւնն է. քաղցր ու խաղաղ սրտերը միայն պիտի կրնան լրիւ վայելիլ ողորմութեան առթած Գոհունակութիւնը: Քէնն ու յոսկայութիւնը կ'ստորնացնեն բարձրագոյն հոգիները, իսկ թշնամանքի մոռացումը իր հետ կ'ընդհատեն սրտին ծայրապատար անդորրութիւնը, որուն մարդ պիտի կարօտի շարունակ աշխարհային կեանքի մը ձախող պատահարներուն մէջ: Ահա, ինչո՞ւ համար Քրիստոս իր առաջին քարոզու-

թիւններէն միոյն մէջ կ'գատապարտէ ընկերին դէմ
գրգռուած բարկութիւնը , չարամիտ ակնարկ մը , և
սեղանին վրայ մատուցուած «պատարագ» մը , երբ ա-
նոր ճենճերոզ ծուխին հետ խառնուած են բարկութեան ,
տաեկութեան և քինախնդրութեան մութ ամպեր : Զոհե-
րուն ամենէն մեծագոյնը , ամենէն նուիրականը , յաչս
Քրիստոնէութեան , տաեկութեան զգացումին շնն է :
Զոհի ոգեկանացումն է ասիկա , զոր Քրիստոս կ'ընէ
Հրէից նիւթական զոհին տեղ : Այո , պէտք է սեղանին
վրայ թողուլ զոհը , ու երբ սիրտն աւելի մաքրուած կ'ըզ-
գայ մարդ , և հոգին ամբիժ՝ մարմնուոր ակտերէն ,
այն տաեկ միայն պէտք է նուիրական հօրը մօտեցնել
անոր , զանի ընծայելու համար Աստուծոյ , իբր նիւթա-
կան մատուցումն իր աննիւթական զոհին : Թշնամանքի
մօռացումը , տաեկութեան զգացումին անէացումը ան-
հրաժեշտ է մեզի , ո՛չ միայն անոր համար , որ ընկերա-
կան շրջանակի մը մէջ կ'ապրինք , այլ և անոր համար ,
որ մարդկային իւրաքանչիւր անհատ , իր կենաց գոր-
ծերուն և խորհուրդներուն մէջ , աւանց բացառութեան
ունի վայրկեաններ , որոնք պղծած են իր սիրտն ու հո-
գին , ինչպէս հրէական զոհերը պղծեցին Աստուծոյ սե-
ղանը : Զգուշանանք , մի՛ գուցէ մութի մէջ պահուած
խորհրդաւոր շրթունք մը ըսէ մենե իւրաքանչիւրին . «Ան-
մեզն ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քարո . երբ այդ անմեղը
չպիտի դառնուի մեր մէջ :

«Զողորմութիւն կամիմ և ոչ զզոհ» : Այո պիտի ըլ-
լայ քրիստոնէին կենաց նշանաբանը , Աստուծոյ սեղա-
նին առջեւ : Ողորմութեան ու սիրոյ արդիւնքներն վեր-
կարար են մարդկութեան համար , և այն գործերն , ո-
րոնք սէր և ողորմութիւն կ'ըսեն , յաւիտենական
կեանք ունին : Ուրեմն , մեր գործերը տեւական ընելու
ջանանք , թող ողորմութեան և սիրոյ զգացումը առաջ-
նորդէ մեզի մեր կենաց օրերուն մէջ , որպէս զի Աս-
տուծոյ ողորմութեան արժանանանք :

ՄՈՒՇԵՂ . Գ .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ամեն Տ. Մատթէոս Ս. Պատրիարք Հայոյն , որ անցեալ չարաթ օրէն ի վեր Սկիւտար կը գտնուէր , չարեք-չարթի օրը Պատրիարքարան իջաւ և նախադահեց խառն ժողովին :

Անցեալ կիրակի հանդիսաւոր կերպով Արմաշու Եկեղեցւոյ մէջ հաւատարմեցաւ Գաղթականաց եօթն անդկանիկ ասնորուն վարդապետական ատարձան և գաւազանի իշխանութիւն տրուելուն արարողութիւնը : Դեր. Օրմանեան Սրբազան յատկապէս ժամարար եղաւ նոյն օր . իսկ խարտաւիլակութիւնը հաւատրեց Արթ. Տ. Եղիշէ Յ. Վ. Դուրեան՝ բարձր Միաբանութիւնն և ոչա-կերտը գղեատաւորեալ մասնակցեցան հանդիսին :

Նախ՝ բեմին առջեւ հաւատաց գաւառութեան մասը լրացնելէ յետոյ , եկեղեցւոյն երեք կողմերը փակադրուելով , մասնաւոր վարդապետութեան երեք ատարձանները տրուեցան , և յետոյ ի բեմ բարձրանալով հաւատարմեցաւ չորրորդ ատարձանի տաշութիւնը : Խրաքանչիւրին համար յատկապէս զատ զատ գաւազաններ պատրաստ բռնած էին մանուկ գալիքներ բեմին վրայ , և այս անգամ՝ ամենուն մի առ մի գաւազանները տըրուեցան , և ի վերջ արարողութեան խարտաւիլակ վարդապետին առաջնորդութեամբ աւանդատուն գաւառաւով , այն տեղ թողուցին գաւազանները :

Պատարագի ընթերցումովն տուէն , Դեր. Օրմանեան Սրբազան յորդորական քարոզ մը խօսեցաւ , բնաբան առնելով . «Մի՛ զոք կոչէք վարդապետ , զի մի է ձեր

ուսուցիչ . . . զի ուսուցիչ ձեր Գրիգորս է» , և բա-
ցաորեւով թէ եկեղեցւոյ վարդապետներն ի՛նչ պիտի
քարոզեն և ի՛նչպէս պիտի քարոզեն :

Յաւարտ պատարագի , պարտաւարտչաճ շնորհաւ-
րութիւններ կատարուեցան Միաբանութեան և ասկա-
ւութիւն ուխտաւորաց կողմանէ :

Աւասիկ նորինծայ վարդապետաց անունները .

Տ . Բարկէն	վարդապետ	Երեւեան , Այնթապի
Տ . Խոսրով	»	Պէհրիկեան , Զարացի
Տ . Զաւէն	»	Տէր եղիայեան , Պաղտատի
Տ . Մուշեղ	»	Սերոբեան , Արաւանդեկի
Տ . Սմբատ	»	Սասակեան , Ատուրաղարցի
Տ . Աղան	»	Համամեան , Ասուշեխի
Տ . Մալթոց	»	Փափաղեան , Վանեցի

Դպրեւանսաց ուսաջին շրջանը կը փակէ այս կերպով
իւր ընթացքը , եօթն նորինծայ վարդապետներ ընծա-
յելով , եօթը յաւաքից երիտասարդ ոյժեր եկեղեցական
պաշտօնէութիւնը դոգայներու :

Երկրորդ շրջանն ունի հինգ տարիաւորներ , որոց
տարիաւորութեան եռամեայն լրանալու մօտ է , և ա-
րեւելյութեան ու վարդապետութեան անցներու պատ-
րաստ կը գտնուին :

Աղգ . Հիւանդանոցին բժշկապետ Տաթ . Թիբեաբ-
եան էֆէնտի , որ հրաժարական առած էր յայդ պաշ-
տօնէն , ետ առաւ դոյն՝ Հոգարարձութեան տնօրոյա-
կան խնդրանաց վրայ՝ և խոտապաւ ըստ ուսաջ-
նոյն շարունակել այդ պաշտօնը :

Աղգ . Կեդրոնական վարժարանի այս տարւան շրջա-
նաւորաներուն բերանացի հարցաքննութիւնը կը սկսին
այսօր , չաբաթ , 1 յունիս , և կը տեւեն մինչեւ յու-
լիս 5 , ուրբաթ , ընդ-միջաբար տասներջորս օր , մասնա-
ւոր ժամանակացոյցի մը համաձայն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Ա Ն Գ Լ Ի Ա . — Անդւիտյ մէջ ազատականք երկու աթու-
կորկեցին՝ մին պաշպանողականներէն և միւսն ալ միութենա-
կան ազատականներէն , որով երեսօխոխանական ժողովոյ քուէ-
արկութեանց մէջ ազատականք չորս քուէի վուտ շահ մը ու-
նեցան : Նոր ընտրեալ ազատական երեսօխոխաններն են Պ . Ճօն
Պարլօսն և Պ . Հէտաբըրուիք :

— Կ . Պոլոյ անդլիական ղեապան Սըր Ֆիլիք Դըբրի ,
չոր երկար ունկնդրութեան մը ընդունեց Լորտ Սալլսլըրի ,
մէկուկէս ամիսէն Կ . Պոլիս պիտի դառնայ :

Ռ Ռ Ի Ս Ի Ա . — Շատ տխուր կերպով վերջացաւ Ռուսիոյ
Նիքօլա Բ . Կայսեր ու Կայսրուհւոյն թագադրութեան հան-
դէսն :

Ժողովրդական հացկերոյթի մը և գաւաթներու բաշխման
մը պահուն հինգ հարիւր հազար հողիի չափ բազմութիւն մը
զիրար հրմշտկելով , չորս հազարի մօտ մարդիկ մեռան եւ եր-
կու հազարէ աւելի ալ վիրաւորուեցան :

Կայսրը հազարական բուսլի շնորհեց արկածեալ իւրա-
քանչիւր ընտանեաց :

— Թագադրութեան հանդէսներն աւարտեցան մեծ զօ-
րահանդէսով մը : Տէրութեանց ներկայացուցիչները՝ Զարին
ներկայանալով՝ իրենց հրաժեշտի ողջոյնը մատուցին :

Ֆ Ր Ա Ն Ս Ա . — Ֆրանսայի կառավարութիւնն որոշեց որ
Մատակառքար կղզին պարզ գաղթականութիւն մը ըլլայ , ու-
րիշ գաղթականութեանց պէս , որք երեսօխոխան ու ծերա-
կուտական կը զրկեն Փարիզ :

— Հանրաժանօթ ֆրանսացի գրագէտ , քաղաքագէտ ու

ընկերարան Պ. Ժիւլ Սիմոն , անդամ Ֆրանսական Ակադեմիային , մեռաւ : 1814 ին ծնած էր ի Լոռիան (Մօրպիհան) :

Ի Տ Ա Ն Ի Ա . — Իտալիոյ և Հապէշաստանի միջեւ հաշտութեան բանակցութիւնք կը կատարուին : Իտալիոյ կառավարութիւնը կը հրաժարի Հապէշաստանի վրայ թեւարկութենէ , սակայն ասոր փոխարէն ալ կը պահանջէ որ Հապէշաստան խոստանայ ուրիշ ոչ մէկ Տէրութեան թեւարկութիւնն ընդունել իւր երկրին վրայ :

Յուսակի չէ որ Մենելիք ընդունի , որովհետեւ ինք իրաւունք չճանչնար խալափցիներուն՝ իրեն պայմաններ առաջարկելու :

Ռ Ռ Ի Մ Ա Ն Ի Ա . — Ռումանիոյ դահեղէց մետրապօլիտն Տ. Եննատիէ՝ Սինոդին որոշմամբ՝ դատապարտուեցաւ աստիճանադրութեան՝ և վանք մը զրկուեցաւ հոն իբրեւ պարզ արեղայ փակուելու համար : Այդ վճռին պատճառը սա է թէ Տ. Եննատիէ , որ երեք տարիէ ի վեր կը պաշտօնավարէր , կը քանար ոչնչացնել Սինոդին որոշումներն , և բացարձակ իշխանութիւն ձեռք ձգելու կը հետամտէր :

Ս Պ Ա Ն Ի Ա . — Պարսէլոնաի մէջ Ս. Հողորդութեան տօնին թափօրներուն առթիւ անկարգութիւնք տեղի ունեցան : Մեռեալ 10 հոգի , վիրաւորեալ 43 : Հրամանատարը պատերազմական վիճակ հռչակեց :

Ս Ռ Ի Տ Ա Ն Ի մէջ Եգիպտացիք բաւական յառաջացան . բայց ամրան տաքերուն իրենց դիրքերը զօրացնելով պիտի շատանան , և Սեպտեմբերէն ետքը պիտի շարունակեն իրենց յառաջխաղացումը դէպ ի Տօնկոլա և ոմանք կ'ըսեն՝ մինչեւ Խարթում :

Թարգմանութիւնք Կ. Ս. Իւթիւնեանի

ԶԵՂԶԵԱԼ ԳԻՆԵՐ

	Zaisnr	Ղրուց
Թափառական Հրեայ (Էօժէն Սիւ)	4	50
Հնտանեզուրկ (Էքթօր Մալոյ)	2	12
Կարմիր Մարդոց Երդումը (Բօնսօն տիւ Թէրայլ)	2	10
Կրանմ նաւապետին որդիքը (Ժիււ Վէրն)	3	15
Հինգ շաքամ օղապարիկով	2	12
Ամուսնութիւնք Փարիզի (Էտմոն Մպու)	1	5
Զիկազակ (Ֆօրմիւնէ տը Պուաիօպէ)	1	5
Տրկիին Վիլֆէրոն որդի (Լէան տը Թէնայ)	1	5
Սկզբունք քաղաքական տնտեսութեան (Ժօ-գէֆ Կառնիէ)	1	3
Պատմ. Օրինագիրք Օսմ. Պետութեան	1	2
Արկածք Միւնխիւազէն Պարոնի	1	2

Կեդրոնատեղին է ՊԱՂՏԱՏՆԵԱՆ ԳՐԱՏՈՐԻՆ ԵՈՒԼ-
Թան Համամ Թիւ 14:

ԹՇՈՒՆԱՐ ԸՆՏԱՆԻՐ

ՀԵՂԶԵԱԼ ՄԱՆԻԻՆ ԱՌՄԱ

Ժողովրդային կեանքէ քաղուած վիպակ մը
Տպագր. Գ. Պաղտատլեան